



**ԱՐԵՆԱՑ ՀԸՆՈՅ ՎԵՀԱՓԵՌԻ ԿԵՄՈՂԱԿՈՍ Տ.Տ. ԳԻՒՌԻ Վ Խ ԹՁՅՈՒԹՅԱՆ
ՕՉՈՒՆՆԻ ԸՆԴՈՒՄ**

Յատկապէս Տարագի համար լուսանկարեց Մինօղի անդամ հ. Բարգէն վարդապէտը:

Բ Ա Ց Ա Ր Հ Ա Կ Ն Ե Ր

XLVIII

ՆԱԽԱՏՈՆԱԿ 1500 ԱՄԵԱՅ ՀԱՅ
ՏԱՐԻ ԵՒ 400 ԱՄԵԱՅ ՀԱՅ ՏՊԱԳԲԱՒ-
ԹԵԱՆ:

առի և տպագրութեան յօրելեանը այս-
օր, հոկտ. 12-ին, ս. Էջմիածնում, հա-
յութեան հոգու, սրտի, մաքի լուսատո-
նւիրական ս. Խորանում և Թիֆլիսում՝ ոռուահայերի
մտաւոր կենդրումում, կատարուում են նախատօնակի,
իսկ վագւանսից, ս. Թարգմանիչների տօնախմբութեան
օրից համայն հայութիւնը ամենուրեք, ուր կայ հայ
եկեղեցի, զպրոց, հայ օջախ, հայ լիզու ու դիր, մի
ամբողջ տարի կատարելու է այս հազւագիւտ, նոյնիսկ
ամենակուլառական ու հզօր ապգերի համար էլ, Յօ-
րելիսանը: Վաղը, հոկտ. 13-ին, Ամենայն Հայոց Վեհա-
փառ Կաթողիկոսը մեծաշուր հանդիսով Մայր Աթոռից

մեկնելու է Օշական՝ Մեսրոպի գերեզմանի վրայ հո-
գեհանգիստ ու պատարագ մատուցանելու, հետեւալ օրը
ս. Իջման Տաճարումն է կատարելու հանդիսաւոր հո-
գեհանգիստ անմահ մեր ս. Թարգմանիչների յիշատա-
կին և ապա Գէորգեան ձեմարանը ու հայ բոլոր եկե-
ղեցներն ու դպրոցները այդ օրը տօնախմբելու են
Յօրելեանական կենդրունական Յանձնաժողովի պատ-
ւաւոր նախագահ Վեհափառ Կաթողիկոսի տնօրինու-
թեամբ:

Ոռուահայութեան մտաւոր կենդրումում, Թիֆլի-
սում, այս հազւագիւտ Յօրելեանի նախատօնակը կա-
տարում է Աղքիւր-Տարագի զրական-գեղագիւտներն Սալօնը, այսօր, ուրբաթ, հոկտ. 12-ին: Ինչպէս միշտ,
այսօր էլ հրաւիրւած են այս հանդիսին մեր կրակա-
նագէտներն ու արևիստագէտներն, առանց խարութեան
ազգութեան, գրական ուղղութիւնների, քաղաքական
համոզութիւնների, գաւանութիւնների և անձնական մի-



Օւական. Ս. Մեսրոպի գերեզմանը:

Օշական գիւղը, ուր ամփոփուած է ս. Մեսրոպի մարմինը, գտնուում է էջմիածնից դէպի հիւսիս, մօս իրկու ժամ հւաւորութեամբ վաղարշապատից. Մայր Աթոռի սեպ։ ական կալուածական գիւղերից մէկն է և մօս 300 տուն ընակիչ ունի. Սր. Մեսրոպի գերեզմանի վրայ հայոց հազարապետ վահան Ամատունին մի հոյակապ եկեղեցի էր կառուցել որը 1639 թ. նորոգեց Փիլիպպոս կաթողիկոսը: Իսկ այժմեան փառահներ, սրբատաշ քարեց շինած տաճարը կառուցեց երջանկայիշատակ Գէորգ Դ. կաթողիկոսը՝ Ռուսաստանի հայոց նուէրնիրով, 1879 թ.: Եկեղեցու սեղանի վէմ քարի տակ գըտնուող այրի մէջ և ամփոփուած որ. Մեսրոպի, մեր աղքային գրի ու զրականի թիւնաղը ինկելի ամիւնը:



Օւական գիւղի ընդհանուր տեսա ան

առանձինի: Մեր տեսնչանքն է, որ հայութիւնն այսպիսի հազարպետ և նուիրական մօմենտներ՝ ն շրջանայեաց լինէր, գիտակցէր օրւայ վեհութիւնն ու նշանակալից լինէլը: Առ է ոչ միայն հայութեան հոգու և սրտի բառատու խորան 1600-ամեայ Մայր Աթոռ Էջմիածնում է վայել կատարել այս մեծ Յօքելեանի ահիթով համաշխարհային այն վեհածովով, որին բացի հայութեան բոլոր հաստածները, մասնակցէին և աշխարհին նեղնահաւոր հայագէտները, լեզագէտները, հնագէտներն ու պատմագէտները:

Այս վեհաժողովին, առանց տատանւելու, պիտի ընդպրձակ մասնակցութիւն ունենան և պրեզեպիումի մէջ լինին մեր Միթթարեան երկր ուսումնական, հայ դրականութեան կաճանները թէ Վեհստիկի և թէ Դիէննայի: Միթթարեան երկու Միթթանութիւնները վնց այժմեանից պէտք է ուղարկեն իրանց աւտօրիտետ ներկայացուցիչները Խուսահայութեան մտքի կնողոն Թիֆլիսը և Էջմիածին, որպէս զի յօքելեանական կենցր. Յանձնաժողովի, իրրի մայուն անդամութեան, կազմին և մշակեն այն հարցերը, որ գիտնական վի-

համոզուին պիտի գեկուցանւեն, բննւեն, հայւեն, պարզւեն և վճռւեն, պարտաւորական համարիւլով բոլոր որոշութերը համայն հայ գպրոցների, գրականագէտների և ուսուցիչների համար:

Հայ տառի 1500-ամեակն ենք կատարում, իսկ մինչև այսօր էլ զեռ վերջնականապէս չորոշւեց նրա իւրաքանչիւրի տեղը լինել ու չըլինելը: Այս հարցի շուրջը չենք երկարում, քանի որ տպագրում ենք Տարբաղի ներկայ Ն.-ում այս մասին յատուկ յօդւած մեր տոկուն աշխատակից Լէօնիդի:

Տառի և ուղագրութեան հարցը մենք համարում ենք ամենաէականն ու անհրաժեշտը նախ ապահովենք 1500-ամեայ հայ տառի գիրքը, լինել չըլինելը և ապա թէ որոնենք միջոցներ այդ տառին սպասաւուրողներին ապահովցնելու:

Հ. Եւս